2126.21/1095

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«17» 02 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0037-21

Ձեռնարկողը՝ ***«Ռոփ Լենդ» ՍՊԸ***
Ք. Երևան, Սեբաստիա 22, բն.29/1

Գործունեությունը՝ ***Տաթև համայնքի տարածքում բազմաֆունկցիոնալ էքստրեմալ և ԷԿՕ զբոսաշրջության համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0037-21

<<17>> 02 2021թ.

Սյունիքի մարզի Տաթև համայնքի տարածքում բազմաֆունկցիոնալ էքստրեմալ և ԷԿՕ զբոսաշրջության համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝ «Ռոփ Լենդ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ Նախնական գնահատման հայտ
Գ կատեգորիա

Տեղադրման վայրը՝ Սյունիքի մարզ, Տաթև համայնք, գյուղ Տաթև

Նախատեսվող գործունեության բազմաֆունկցիոնալ էքստրեմալ և ԷԿՕ զբոսաշրջության համալիրի նախագիծը (զիփլայն) նախատեսվում է իրականացնել Սյունիքի մարզի Տաթև համայնքի վարչական շրջանի Տաթև գյուղի տարածքում: Գործունեության իրականացման նպատակն է՝ տուրիստական հանգստի գոտու ստեղծման միջոցով խթանել տարածքում էկոտուրիզմի զարգացումը: Նախատեսվող գործունեությունը կատարվելու է զբոսաշրջության զարգացման ծրագրի հիման վրա, որն իրականացվելու է 3 փուլերով: Ներկայացված նախնական գնահատման հայտը ներառում է միայն 1-ին փուլը: Ամբողջական ծրագրի իարականցման՝ 2-րդ և 3-րդ փուլերի համար պահանջվելու է 5 տարի և լրացուցիչ հողատարածքներ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 8) կետի բ. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս.

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ նախատեսվող գործունեության դիտարկվող տարածքները (1-ին փուլ) ընդգրկելու են Սյունիքի մարզի Տաթև համայնքի վարձակալած տարածքը: Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի վկայականներ՝ անտառային հողերի N15102019-09-0018(0.04հա), N15102019-09-0019(0.01հա), N15102019-09-020(0.2164հա) և «ՌՈՓ ԼԵՆԴ» ՍՊԸ սեփականություն հանդիսացող հասարակական կառուցապատման նշանակության հողատարածքների N20082020-09-0018(0.01հա), N20082020-09-0020(0.01հա) ու 2020թ. դեկտեմբերի 22-ի N18 նախագծման թույլտվության հիման վրա: N15102019-09-020(0.2164հա) անտառային հողատարածքը բաժանվել է երեք մասի (վկայականներ՝ N22102020-09-

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀԱ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊՈԱԿ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

0003(0.1436հա), N22102020-09-0008(0.0511հա), N22102020-09-0009(0.0217հա)), ինչի բաժանման պատճառը հանդիսացել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության հաշվեկշռում հաշվառված 220ԿՎ «Մեղրի-1,2» երկշղթա օդային գիծը: Արդյունքում 0.1436հա հողատարածքը կծառայի որպես էլեկտրական ցանցերի անվտանգության գոտի և կհամալրվի մարդու առողջության ու անվտանգության պահպանմանն ուղղված ցուցանակներով:

Նախատեսվող գործունեության տարածքի ռելիեֆն ունի ծալքավոր կառուցվածք՝ կտրտված ռելիեֆով և գետահովիտներով: Երկրաբանական կառուցվածքին բնորոշ են թթու կազմի տուֆերը, անդեզիտաբազալտները, դացիտները և այլ հրաբխային նստվածքները: Կլիման մեղմ է, երկարատև տաք ամառով և ցուրտ ձմեռով: Նախատեսվող գործունեության տարածքում սողանքային երևույթներ չկան:

Ենթակա և հարակից տարածքների հողերին բնորոշ են անտառային դարչնագույն, մարգագետնային և լեռնամարգագետնային հողերը: Տարածաշրջանի բուսական աշխարհը բնորոշվում է ալպյան, մերձալպյան, տափաստանային տիպերով և գերիշխող խոտաբույսերով: Կենդանական աշխարհը բազմազան է՝ ողնաշարավոր, գիշատիչ, ջրային կենդանատեսակներով, թռչնատեսակներով, տարատեսակ սողուններով: Սակայն գործունեության ենթակա տարածքի կենսաբազմազանությունն աղքատ է՝ պայմանավորված անտրոպոգեն ազդեցություններով: Համաձայն հայտի՝ դաշտային հետազոտությունների արդյունքում, գործունեության բուն տարածքում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ չեն հայտնաբերվել:

Նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտ ջրային ռեսուրսը Որոտան գետն է՝ 130մ հեռավորությամբ: Գործունեության ենթակա տարածքը գտնվում է «Գորիսի» պետական արգելավայրից 5կմ, «Շինուհայր» ջրվեժի և «Ջրաղացի աղբյուր» բնության հուշարձաններից՝ 0.5կմ, «Տաթևի անապատ» համալիրից՝ 400մ, «Եկեղեցի Յակուտ» բլուրից՝ 65մ/թռիչքակետ/ և 35մ/ճամբար/, գլխավոր ճանապարհից՝ 6մ հեռավորությունների վրա: Համաձայն հայտի գրունտային ջրերը տարածքում բացակայում են:

Նախատեսվող գործունեության առաջին փուլում նախատեսվում է իրականացնել ճամբարային գոտի/վրաններ/, խարույկատեղի, արշավներ, ձիարշավ և զիփլայն: Ճամբարային գոտին զբաղեցնելու է մոտ 300մ² տարածք, որտեղ լինելու է վրանային ճամբարը, իսկ հաճախորդների հեռանալուց հետո վրաններն ապամոնտաժվելու են: Էկոարշավները կազմակերպվելու են ամբողջ Սյունիքի տարածքում գոյություն ունեցող արահետներով: Ձիարշավները կազմակերպվելու են համայնքի բնակչությանը պատկանող ձիերով՝ պայմանագրային հիմունքներով:

Զիփլայնի տեղադրման համար նախատեսվում է ընդամենը 5 թռիչքակետեր և վերջնակետեր՝ յուրքանչյուրը 27մ² մակերեսով տարածք՝ ոչ հիմնական, տեղափոխվող երկաթ-բետոնե հիմնասյուների և փայտյա ծածկով հարթակների տեղադրման համար: Զիփլայնի համար նախատեսված թռիչքակետերը տեղադրվելու են Որոտան գետի աջ և ձախ կողմերում: Ճոպանների բարձրությունը գետից կազմելու է 50-110մ: Գործունեության տարածքում սպասարկման նպատակով տեղադրվելու են նաև ոչ հիմնական կոնստրուկտիվ շինություններ/180մ²/: Զիփլայնի շինարարական և մետաղական մասերը լինելու են եվրոպական և միջազգային ստանդարտներին համապատասխան: Խարույկատեղին, ինչպես նաև ամբողջ տարածքը վերահսկվելու է անվտանգության աշխատակիցների կողմից: Նախատեսվում է նաև ավտոմեքենաների

ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

կայանման համար օգտագործել տարածքի սկզբնամասը՝ 130մ² ճանապարհին կից գրունտային հատվածում:

Համաձայն գնահատման հայտի 160մ² տարածքն օգտագործվելու է որպես պաշտպանական և սանիտարահիգիենիկ նշանակության ռեկրեացիոն գոտի և կանաչապատվելու է տարածաշրջանին բնորոշ բուսատեսակներով: Ճեմուղիների երկայնքով տնկվելու են 30 մրգատու ծառեր՝ սովորական նշենի, ընկուզենի, կեռասենի, նռնենի և այլն: Գործունեության իրականացման ընթացքում ծառահատում չի լինելու: Կանաչապատման տարածքի ոռոգումը կատարվելու է բնական ճանապարհով/տեղումներ/ կամ չոր եղանակներին՝ դույլով:

Համալիրի կառուցման 1-ին փուլի աշխատանքների ավարտը նախատեսվում է մինչև 2021թ.հուլիսի 1-ը: Շինարարական աշխատանքները կատարվելու են շրջափակված փոքր արտադրական հրապարակներում: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու են շինարարական տեխնիկա-տրանսպորտային միջոցներ՝ ավտոկռունկ, բեռնատար մեքենա, էքսկավատոր, որոնց աշխատաժամանակը լինելու է կարճաժամկետ: Շինարարության փուլում ներգրավվելու են 14 մարդ:

Նախատեսվող գործունեության 36մ² տարածքում, կեղտաջրերի հեռացման նպատակով տեղադրելու է 12600լիտր տարողությամբ սանհանգույց և լոգարան՝ սեպտիկ հորով: Սեպտիկ հորից կեղտաջրերը հատուկ մեքենաներով հեռացվելու են կոյուղու ցանց: Ջրահեռացման սպասարկումն իրականացվելու է «Վեոլիա ջուր» ՍՊ ընկերության կողմից:

Նախատեսվող գործունեության էքստրեմալ և ԷԿՕ զբոսաշրջության համալիրի կառուցման ընթացքում կատարվելու են 28մ³ ընդհանուր ծավալով հողային աշխատանքներ: Հանված հողը/23մ³/ և քարային հանույթը/5մ³/ տեղափոխվելու է համայնքապետարանի կողմից հատկացված վայր՝ «Խիզոյի ոլորան» տարածք:

Շինարարության ժամանակ օգտագործվող նյութերը կբերվեն պատրաստ վիճակում և կտեղակայվեն տարածքում: Գործունեության իրականացման շինարարության ընթացքում օգտագործվելու է բնառեսուրս՝ ջուր, տարածքների ջրցանի (ընդհանուր 1500լիտր), հողի/գրունտ/ խոնավացման և աշխատողների խմելու, կոմունալ կենցաղային կարիքների համար(16,775մ³/շինժամ): Ջրցանի համար պահանջվող ջուրը կբերվի դեպի Տաթև բարձրացող հինգերորդ ոլորանում գտնվող բնական աղբյուրից: Ջրցանը կատարվելու է այնպես, որպեսզի չառաջանան շինարարական արտահոսքեր: Շինարարության ընթացքում տեխնիկական ջուրը մատակարարվելու է ցիստեռնով և բաքերով, իսկ խմելու ջուրը մատակարարվելու է բաքերով և ստերիլ շշերով՝ համայնքի գոյություն ունեցող ջրագծից: Էլեկտրամատակարարումը կատարվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից:

Գործունեության իրականացման ընթացքում շինաղբ չի առաջանալու, քանի որ տեղադրվող կառուցվածքները բերվելու են պատրաստի վիճակում: Առաջացող 30-40 կգ ծավալով կենցաղային աղբը հավաքվելու է աղբահավաք տարողությունների մեջ և տեղափոխվելու է Տաթևի համայնքապետարանի կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, բուսական և կենդանական աշխարհի պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի /օդային գծի

անցկացում, ճոպանների աշխատանք և այլն/ նվազեցմանն ուղղված հետևյալ բնապահպանական միջոցառումները, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում:
Մասնավորապես.

- գործունեության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի իրականացում,
- տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործում՝ սարքին վիճակում,
- անհրաժեշտության դեպքում բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության գործողությունների մշակում՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2014թ.հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներով,
- կենդանիների ձվադրման շրջանում տեխնիկական միջոցների շահագործման դադարեցում,
- աշխատանքի ընթացքում շարժիչների, էլեկտրական սարքերի ծածկում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,
- աշխատանքների և տրանսպորտի տեղաշարժի կազմակերպում՝ ցերեկային ժամերին,
- շինարարական տեխնիկայի սպասարկումը /լիցքավորում, յուղում/ համայնքի լցակայաններում և սպասարկման կետերում՝ շրջակա միջավայրը աղտոտումից պահպանելու նպատակով,
- արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերի պահպանում և այլն:

Պատճառաբանական մաս. Նախնական հայտի համաձայն գործունեությունն իրականացվելու է ՀՀ-ում գործող շինարարական, հակահրդեհային, սանիտարահիգիենիկ, սեյսմիկ և շրջակա միջավայրի պահպանման նորմերին ու կանոններին համապատասխան: Հայտով նախատեսված միջոցառումների կատարման արդյունքում բացառվելու կամ մեղմվելու են շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունները, Կադաստրի պետական կոմիտեն: Հայտը լրամշակվել է հաշվի առնելով նաև ստացված դիտողությունները և առաջարկությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Սյունիքի մարզի Տաթևի վարչական համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը նախատեսվող գործունեության վերաբերյալ դրական է արտահայտվել:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ:
2. Գործունեության իրականացման ընթացքում բացառել Որոտան գետի աղտոտումը՝ վտանգավոր նյութերի, կեղտաջրերի ներթափանցումը, ջրային ռեսուրսի որակական հատկությունների փոփոխումը:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

3. Անհրաժեշտության դեպքում իրականացնել բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության լրացուցիչ գործողությունների կատարում, առաջնորդվելով ՀՀ կառավարության 2014թ.հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներով:
4. Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը՝ բացառելով ծառահատումները:
5. Առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման պահանջով՝ գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:
6. Բացառել «ԲԷՑ»-ի տարածքում նախատեսվող գործունեության իրականացումը (վրանների տեղադրում և այլն):
7. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը՝ արտակարգ իրավիճակները բացառելու նպատակով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ռոփ Լենդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ բազմաֆունկցիոնալ էքստրեմալ և ԷԿՕ զբոսաշրջության համալիրի (զիփլայն) կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ Ա. Վարդանյան